

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ



Ռուբեն Թովչյան
ՈԱԱԿ - տնօրեն

Փակման խոսք

Երևան, հոկտեմբերի 9, 2012

Ամփոփում

- Շատ կարևոր է որդեգրել մի մոտեցում, որը կնպաստի որակի ապահովման ազգային համակարգի ձևավորմանը և զարգացմանը: Պետք չէ կուրորեն հետևել արտասահմանյան պահանջներին և չպետք է շտապել:
 - Անհրաժեշտ է կարևորել դասախոսի և ուսանողի դերը այս գործընթացում , քանի որ նրանցից է կախված ամբողջ համակարգի առաջընթացը և հաջողությունները:
- Անհրաժեշտ է անցում որակի վերահսկումից որակի ապահովմանը
- Անհրաժեշտ է մուկի կառավարման նոր մոտեցումներ. որակի ապահովումը որպես ՄՈՒՀ-ի կառավարման շարժիչ ուժ:

Ամփոփում

- Կարևորվեց որակի ապահովման արդյունքների ճանաչումը և որակի ապահովման կառույցների փոխճանաչումը:
- ENQA –ի փորձագետը ներկայացրեց ՈԱԱԿ – ի գործունեությունը կարգավորող, ինչպես նաև անկախությունը և թափանցիկությունն ապահովող փաստաթղթերում անհրաժեշտ փոփոխությունները:
- ՈԱԱԿ-ի փորձագետները ներկայացրեցին իրենց դիտարկումները իրականացված գործընթացների վերաբերյալ: Կարևորվեց փորձագետների շարունակական վերապատրաստման անհրաժեշտությունը:

Ամփոփում

- Քննարկեցին իրավական դաշտում առկա թերություններն ու հակասությունները և վերանայման անհրաժեշտությունը: Առաջարկվեց ավելի ուշադիր լինել ՈԱՇ-ի և պետական չափորոշիչների մշակման և լրամշակման գործընթացներում, ինչպես նաև վերանայել մասնագիտությունների ցանկն ըստ ոլորտների:
- Ուսանողները ներկայացրին իրենց տեսակետը համակարգի խնդիրների շուրջ՝
 - Գնահատման համակարգ
 - Դասավանդման մեթոդներ
 - Կրեդիտային համակարգը և այլն:

Ամփոփում

- Ներկայացվեց Ագրարային համալսարանի փորձը: Մասնավորապես նշվեց թե ինչպես են մշակել ինքնավերլուծությունը իրականացնելու գործիքները և ինչպես են ապահովել շահակիցների ներգրավվածությունը:
- Ուսանողները ներկայացրին, թե ինչպես են ներգրավվել ինքնավերլուծության գործընթացին, նշեցին իրենց դերը, ինչպես նաև ուսանողների ներգրավվածությունը այդ գործընթացում առավել արդյունավետ դարձնելու իրենց առաջարկությունները:

Ամփոփում

- Գործատուները արտահայտեցին իրենց անհանգստությունները մասնագետների պատրաստման հարցում և առաջարկեցին համագործակցության եզրեր՝
 - Պրակտիկանների կազմակերպում
 - Որակավորումների բնութագրիչների մշակման գործում:
- ՈԱԱԿ-ի աշխատակիցները ներկայացրին ինքնագնահատման գործընթացում ՈԱԱԿ-ի համակարգողների դերը և նշեցին առկա խնդիրները, արտահայտեցին իրենց առաջարկությունները այն բարելավելու համար:

Ամփոփում

- Գերմանական ASIIN կազմակերպության ներկայացուցիչները կոչ արեցին ՄՈՒՀ-երին էլ ավելի ներգրավվել որակի ապահովման գործընթացում և պատասխանատվություն կրել դրա համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ